

Տարեկան զինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Եւր Հայդէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կալի. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն խզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի առաջնորդող յօ-
գուածի առիթով. Հաքարազործութիւնը Ռուսաս-
տանում. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Խօսերա Սաարօ-Ունգա-
րիայում. Արտաքին լուրեր. — ՀՆՈՒԱՅԻՐՆԵՐ.—
ՊՏԱՍԱԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. Վի-
նչնայի Միախմբարեան Միաբանութեան նորընտրի
աքքանայր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱՇԻ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» № 95-ի «Բարոյական կրթականից ղուր ազգերը» վերնագրով առաջնորդողը պակաս աղմուկ չը հանեց հասարակութեան մէջ: Բնականաբար կային խիստ հաւանողներ եւ մոլի աւտողներ: Բնականաբար ենք առում, որովհետեւ «Մշակի» մասնաճիւղ խոր են ազդում եւ խիստ քննադատութեան են ենթարկւում, նախապէս մեծ խոչորացոյցի տակ զննելով, այն ինչ եթէ մի ուրիշ լինելի աւելի տարին շարունակէ իր առաջնորդներով քաղցր մասնագիտանալ իր թղթակիցներին հետ, չեն ասի թէ դրանից մեզ ինչ: Մոլի աւտողները բարկութիւնը այնքան պերճախօսէ, որ այդ մասին մի քանի խօսք ասելը աւելորդ չէ:

Առհասարակ նկատելի է, որ հայերը իրանց հասարակական գործունեական խիստ ե լուրջ քննադատութիւնը շատ ատում են։ Ուսուցիչը, հողաբարձուն, կամ ուրիշ ոչ պաշտօնական գործիչը—վաճառականը, սեղանաւորը, վաշխաւորն քայի գովաւանքը ուրիշ ոչինչ չէ ուղարկ լսելի իր մի ամենահինի գործն ի քանկանում է երկնքից կախ արած տեսնել ե սաստիկ չարատում է, օրբ իր գործերը քննում են հրապարակով, զայրանում է գրողի, գրել տուողի, տպողի գէմ։ Մինչև իսկ տպարանատիրոջ վրա, զազունի անվայել միւլջոցներ է հնարում իր թշնամուն պատժելու։ հայ ցոյց է տալիս թէ որքան սահմանափակ է նշի մտաւոր զարգացումը, թէ հայը որքան եսամուլ է, անսխալական ե անտերեք մերկ հռչակվելու սիրահար։ Նկատելի է նոյնպէս, որ երբ փորձում են հասարակական կեղծերը նկարագրել ծաղրելով, կամ հետաքրքիր վիպական չրջանակի մէջ դնելով, հայերը սիրահարվում են թշնակաւորաւորութիւնների վրա, կարծելով գուցէ, որ ինչ կռու անողորմ քննադատութիւնը միանգամայն մասնունի այդտեղ։

Զարմանալի է: «Մշակը» խօսում է վաճառա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ԱԲԲԱՀԱՅՐԸ

Պ. Պոստոյ ազգային և օտար լրագիրները, ինչպէս և ՎՄՀակ հազարդեցին մեզ Վիկենայի Միութարեան միաբանութեան նոր արքահայրի ընտրութիւնը՝ վախճանեալ արքահայր գեր. Վարդան Ըստկարեան արքեպիսկոպոսի տեղ: Ընտրված է մեծամասնութեան հաւանութեամբ գեր. հ. Արսէն վարդ. Այ տ ը ն ւ ա ն, մի անձ, որ իրական պատկառաւոր է ազդում այն ամենքի վրա, որոնք ծառայութեան են նրա հետ, կամ լոկի են նրա մասին, — իր բազմակողմանի բարեմասնութիւններովը: Ի նկատի ունենալով, որ այդ նշանաւոր անձնաւորութիւնը բովանդակ ազգի մէջ մի յայտնի դիրք է բռնում թէ իբրև համաբաւար զիտնական և թէ իբրև հայոց մի նշանաւոր ուսումնալիթական հիմնարկութեան վարիչ, աւելորդ չենք համարում ներկայ յօդուածով ծանօթացնել նրա մեծ ՎՄՀակի ընթերցողներին այնքան, որքան հետք անւածաւ տեղեկութիւն ունենք, ի հարկէ, այդ մասին:

կանական կամ մի այլ զգալի անհամար քաջութիւնների, հրաշագործութիւնների մասին, և անսահղեր իսկոյն սկսում են կռուալ: Բայց երբ տաղանդաւոր Սունդուկեան «Պէյսօի» մէջ Զարութիւն է ներկայացնում, լելի մէկ զոհ-ի մէջ Սարգիս, Ստեփան Դանելիւ և Վանօ, երբ Բաֆֆի Մասիսեանի պէս հրէշ է նկարագրում, երբ Շիրվանզադէ առևտրականի բոլոր սարսափելի ֆիզիոնների հանդիսարան «Գործակատարի Յիշատակարան» է հրատարակում, կամ «Նոնաանտաւրը» զարդարում է Գոյմազովի պէս մի մարդով, ամենքը աղաղակում են. «Օ», շատ գեղեցիկ է, շատ հիանալի, որովհետեւ իրական է, մեղանից, մեր կեանքից է վերցրած»: Բայց չէ որ այդ իսկ հերոսները առատորէն գուրս են գալիս այն վաճառականական դատակարգից, որ յիշել է «Մըշակը»:—Այ՛ն, պատասխանում են զայրացած հաստափորները և նրանց արևով երդվողները, այդպէս է, ճիշդ է, բայց այդ տեսակ վատութիւններ բոլոր ազգերի մէջ կը լռանվեն, ինչո՛ւ են մենակ մեզ առուս: Հիանալի՞ լոգիկա: Ուրեմն եթէ մի ազգ դիտող յանկարծ մարդկային դառնալիս, մէկը չը պիտի համարձակվի դրա դէմ խօսել, վախենալով թէ մի գուցէ իրան ասեն թէ, պարոն, ի դուր ես խօսում, աշխարհում միթէ մարդակերներ չը կան: Եթէ Գարիգը անառակութեան, շռայլութեան բուն է, թիֆլիսեցի հայրը ուրեմն իրաւունք չը պիտի ունենայ յանդիմանել, ամիծել իր որդուն, որ լթիւնների հետ է մանգալիս, հասարակաց տներում է քնում, կամ իրաւունք չը պիտի ունենայ աղէկան հասկացնել որ առանց տուրնիրի էլ կարող է ապրել և բախտաւոր լինել, չը պիտի անէ այս, երբ աշխարհի ընդունւած կարգ է տանից չարաթիւների կորչելը և անհադին բարձերով բեռնաւորվելը:

տակայրոքէն և թեթևամտաբար իւրացնելը միայն հայկ. քաջութիւնն է։ Հայը կը մոռանայ իր լեզուն, այդ ոչինչ, աշխարհի կարգ է, կասեն, լեզուն ի՞նչ ևս անուով, քիչ ազգեր կան, որ մոռացել են լեզուն, բանը նա է, որ նա լուսնաորոված է, բարեկիրթ է, հարուստ է։ Հայը անխելքի պէս իր օրերը կը մթնացնէ թղթախաղով, մոռանալով իր բոլոր պարտականութիւնները կասեն՝ ուշադրութիւն մի դարձնի, դա ընդհանուր ազգերի յատկութիւնն է։ Էլ չեն կարողանում տեսնել թէ այդ ազգերի մէջ էլ կան այդ տեսակ վատութիւնները անխաչ հարուածող մարդիկ թէ ոչ։ Մոռանում են միանգամայն, որ այդ ազգերը ունեն ոչ միայն հրուածածող, մտաւոր օրգաններ, այլ և անտրոյմ կիրպով ծաղրող գրականութիւն,

Գերազադատւն հայր Արդէն վ. Այտընեան՝ Վիէնայայի Մխիթարեան միաբանութեան առաջին անդամը եւ այժմ նորա վարիչը, — քեզահայրը, մի փառահեղ ծերունի է արդէն, նիհար կազմուածքով երկայնահասակ եւ ապիտակ աւելօք զարդարուած իրկայն ալեխառն մօրուքը ծածկում է նրա նիհար, բայց ամուր կուրծքը, որ իր վրայապահութիւնը հանդերձ հաստատ պահպանում է իր ետին սիրտն՝ մի սիրտ, որ ամբողջապէս հեղուկիւն է, որ ներկայանում է գորովի եւ քաղցրութեան տիպար եւ որ զլիւաւորն է, ամեն մի առթիւ, ամեն մի քայլափոխին ցուցնում է խնարհամտութիւն զարմանալի Մի լայն ճակատ, որի շուրջը ցանցաւ արծաթափայլ ալիք կանոնաւոր կիսաբոլոր են կազմած, իրաւարձ արպողանցում է ումանց դիմադէտնարի համազունն, որոնք այդպիսի ճակատի ետին նշարաւորւմ են մի լուրջ եւ ծանրախոս միտք։ Եթէ սրա վրա աւելցնենք եւ այն թափանցիկ ակնարկն, որ շուրջ է գալիս անընդհատ նրա բուրակ եւ վիճակիւն արտայայտող աչերում, — կունենանք մի զէմը, որ պատկերացնում է ծանրաբարոյ, լրջամիտ եւ վերին աստիճանի պատկառելի եւ միանգամայն համակրելի մի անձ։ Այն ձեռք վերապատեալն հայրն, մտանայ պահպանուց, հայրք մի նշանաւոր լեզուազէտ գիտնականը, նորոնտիր տքեահայրն՝ Արսէն վարդապետ

որի կծու լեզուն թէ գէթ մի օր շօշափէր հային,
չը գիտեիք թէ ի՞նչ դրութեան մէջ պիտի ընկնէք:
Փաստը, տխուր փաստը կայ մէջ տեղ. քաղաքի միւս
չունէք ջրիւղ, ահա նրան ձեռք կառնէ անաշաւ.
Ինչնադիտողս կ'անշը, կը հարուածէ, կը ծաղիւր.
Որովհետո՞ն աչք է նրա կրկնաժուր:

Բայց մեր դիւրաբորբոք պարտնենրը, երբ օրեկան մի քանի անգամ ոչ միայն հեռաւոր, այլ հարեան ալլաղդիներից լսում են այսպիսի խօսքեր՝ թէ հայի ինչ գործն է քաղաքակրթութիւն, տնտեսական յուսալաւորութիւն, հայը թող գնաւ արշինը վերջին, մարդ խաբէ,—աշխատում են իր կարմիրը իսկ երբ բանը հասնում է թէլիլի վրա մանարտակելուն, ամեն ինչ հանդիսաւոր կերպով դրում են պատմութեան վիշտ։ Բայց հէնց դնենք թէ պատմութիւնը իսկ որ յանցաւոր է։ Միթէ դեռ ժամանակը չէ այդ յանցաւոր պատմութեան իրայտառակ խնամակալութիւնից ազատուելու ինչպիլ էք կարող այդ անել՝ ինքնաճանաչութեամբ, դուք ձեզ ու ձեր գործերը ճանաչելով, տեսնելով,—թէ միմեանց չողորձարթելով, քննելով Գուգէ հայկաւան ազատամարտութիւնը այլ վերջին միջոցն է հաւանութիւն։ Հաւցեցէք նրա սուած գգունները և կը համովվէք չուտով, որ ամեն մի հրապարակ հանած հասարակ ճշմարտութիւնը մի կաթիլ թոյն չէ, որովհետև այդքան դառն է երևում ձեզ, այլ մի դառնահամ դեղ, որ թէն աշխրան դժուարախում է, բայց կանոնաւոր դիէտալի հետ զօրաւոր դիւշոցն է պուղերով մտած ցաւը մահալներով թողոք հանելու համար։ Անցեալի պատմութիւնը թէ յանցաւոր է մեր առաջ, մենք էլ յանցաւոր կը մնանք ապագայի առաջ, թէ այսպէս կը մընանք իբրև այդ պատմութեան շարունակութիւն։

ՏԱԴԱՐԱՆՈՒՄՈՒԹՅՈՒՆԻ ՆԸ ԴՐՈՒՄԱՅԱՑԱ ՆՈՒՄ

Տնտեսական ճգնաժամը, որի ծանրությունն տակ
ձնչվում է ոչ միայն մեր երկիրը, որտեղ արդիւ-
նարեությունը և առևտուրը շատ անհաստա-
հիմքերի վրա են դրված, այլ և ամբողջ Եւրոպան,
ճամաթան բոլորովին խեղդել է զառտ վաճառա-
կանությունն, ազատ մրցման սկզբունքը: Զայնա-
կան երկրներում, զանազան տեսակ մաքսերը
որից որ շատանում են Մի քանի երկիրների կա-
ռավարությունները արդիւնաբերության ծաղկեց-
նելու ամենապղծաբոր միջոցը և ելքը տեսնում են
այն ծանր մաքսերի մէջ, որոնք արելու են օտար
երկրների այս կամ այն տեսակ ապրանքների
մուտքը: Եւ միջնեւ Գերմանիայում, Աւստրիա-
կայում արծաթովում են մի ք ա գ գ ա յ ի ն և տքսա-

Այստեղից հանդիսանում է նաև հայտնի Մանուկ Բաբայանի և Գրիգոր Բաբայանի համատեղ զբաղմունքը՝ հայտնի «Բաբայան» խմբիկի ղեկավարությունը։

Ա. Իբրևս լեզուագէտ՝ Ալտընեան վարդապետ ամբողջ հայոց ազգում առաջններէր մինն է, կամ գուցէ հազիւ թէ սխալված լինէր, եթէ ընդունենք նրան իբրևս առաջինն Նա տիրապետում է հին լեզուներոյ՝ հայերէն գրաբար, իտալերէն, հին յունարէն, սանսկրիտերէն և հին պարսկերէն, նոր լեզուներոյց նոր յունարէն, գերմաներէն, հայերէն աշխարհաբար, ֆրանսերէն, անգլիերէն, իտալերէն, սպանիերէն, ռուսերէն, վրացերէն, տաճկերէն, արաբերէն և պարսկերէն: Եւ այդ բոլոր լեզուներն ա խօսում է այնպիսի ճշգրտութեամբ, որ ընկիկներէ արտասանութիւնք բնաւ չէ կարելի զանազանել: Վաճեն ու միաբանութիւնը այցելող օտարազգիները բոլորովին հիանում են տեսնելով, որ Ալտընեան վարդապետ ամենի հետ խօսում է նրա բնական լեզուով և խօսում է նոյն լեզուին բնական, յատուկ հնչմամբ, որի դժուարութիւնն յայտնի է, երբ խնդրել զալիս է այնպիսի լեզուներէն, որոնց ճշգրիտ արտասանութիւնը չատ քիչներէն է, յաջոն ճշում հայերի մէջ, ինչպէս օրինակ յունարէնը և անգլիկերէնը: Բայց մեր լեզուագէտի հմուտ-

յի՛ն դաշնակցութեան գաղափարները, որոնցով կարելի կը լինի գուցէ մեծ յաղողութեանք վերջ տալ մաքսերը աւելի ու աւելի շատացնելու ձգտումներին,—մի և նոյն ժամանակ, նոյն իսկ Այգլիայում, նոյն իսկ չաքաղագործները դիմում են կառավարութեան՝ խնդրելով դրամական նշանակաւոր տալ իրանց և մաքսերը շատացնել, օտար միջոցով թրւլացնելու՝ գուցէ և ոչնչացնելու համար:

Ռուսաստանի շաքարագործների վերջին տարիները արած պահանջները, առաջարկությունները և յայտնած մտքերը իրանց վրա առանձին ուշադրություն են դարձրել: Շաքարագործների խնդիրը այժմ էլ քննություն առարկայ է, ներկայացնելով ուշադրություն անժամի մի շարք երեյթներ, որոնց մասին մի քանի խօսք ասելը անօգուտ չի լինի:

վերջին տարիները Ռուսաստանի չաքարագործ-ները միշտ հոգ են պատճառել կառավարութեանը իրանց անվերջանալի առաջարկութիւններով, խնդրելներով և պահանջներով: Յայտնի է, որ չաքարագործների պահանջները պարզելու և չաքարագործութիւնը մի որոշ հիմքի վրա դնելու համար կազմակերպւած է մինչև անգամ կառավարակաշան յանձնաժողով: Յանձնաժողովը քննում է չաքարագործներին և չաքարագործութեան դրութիւնը, և շատ շուտով, ինչպէս երևում է տեղեկութիւններից, կը տայ իր վերջնական եզրակացութիւնը այդ խնդրի մասին:—Թէ կը ստանան արդեօք չաքարագործները նորանոր բաւարարութիւններ, և թէ կը տրուի արդեօք նրանց «միջոց» աւելի շահվելու,—այդ մօտիկ ապագան ցոյց կը տայ: Այս միայն անհրեքելի փաստ է, որ չաքարագործները միշտ ունեցել են միջոց՝ չափից դուրս մեծ չանք ստանալու: Սկսած 1877 թ. և 1900 թ. միջև ընկած տարիներէն իսկ չաքարագործները կանոնադրած դրութեան մէջ էր: Շաբաթի գինը կանոնադոր դրութեան մէջ էր: Հախնդից միակութիւնը ծաղկում և կանոնաւորում էր: Սակայն այդ երկար չը տեցւայ:

1881 թվից մտաւաւորապէս, մաքսերի շատնաւոր
պատահաւոր զորքը մի այլ կերպմորանք առաւ:
Այդտասանմանի չաքարի մուտքը դժուարացեցեալս:
Մինչդեռ մինչև այդ ժամանակ, օտար երկրների
չաքարի մուտքը չափաւորում էր Ռուսաստանի
չաքարադրձորներին շահասիրական ձգտումները,
և թիւյլ էր տալիս շատ բարձրացնելու չաքարի
գինը, —այդ ժամանակից սկսած, երբ մաքսերի
պատահաւորով՝ օտար չաքարի մուտքը խափանվեցաւ:
Ռուսաստանի մէջ պատրաստած չաքարի գինը
սկսեց անսպասելի կերպով բարձրանալ: Շաքարի

թիւնը դորանցմով չէ սահմանափակվում: Բայց
վերոյիշեալ զլիաւոր լեզուներէից, որոնց նա հիմ-
նաւորապէս ծանօթ է, մասնաւորապէս գիտէ և
մի քանի այլ եւրօպական լեզուներ, ինչպէս հուն-
գա ր բ ե է ն և այլն: Բայց միթէ բաւականանո՞ւմ
է նա այդքանով — բնաւ: Նա իր լեզուագիտական
պարհետի ծաւալը աշխատում է հետզհետէ ըն-
դարձրակել: Մենք համոզված ենք, որ Այդրնեանի
նման լեզուագէտներն նոյն իսկ ամբողջ Եւրօպա-
յում հազուադէպու են:

բ) Իրրև հայագէտ, կամ հայկաբան, մենք համարձակ դասում ենք հ. Այտընեանին ուղղակի իր մեծ անուանակցից յետոյ: Մենք մեր մեծ յօդուածում, որ հրատարակուած է «Մշակում» — «Վիկենյայի Մխիթարեան միաբանութիւնը» վերնագրով, հայկաբանութեան այս երկու հսկաների միջի տարբերութիւնն ցոյց ենք տուել: Այստեղ կրկնենք միայն, որ «Հայկ Ղիւլպազն», որ փակաձիւ մէջ տանք, ոչ այնքան իբրև բանաստեղծութեան է նամակաւոր, որքան իբրև գեղեցիկ հիւստածք է անփոփ հաւաքածոյ հայկական խօսքի և ընդարձակ քերականութիւնն հայերէն լեզուի»: որքան հեռացնում են Բագրատունիին իրականից և տանում են դէպի պատմական և նախապատմական ազգային շիրիմները, այնքան էլ «Արդի հայերէն լեզուի քննական

գինը 4 ր. 50 կ. բարձրացաւ մինչև 8 ր. 10 կ. Ռուսաստանի մի քանի կողմերում 1882 թինն Աւելորդ է մինչև անգամ մանրամասն թւերով և ճիշտ հաշիւներով մէջ բերել այն մեծ փոփոխութիւնը, որը տեղի ունեցաւ չաքարագործութեան և չաքարի առևտուրի մէջ վերջին տարիներում մաքսերի պատճառով: Այդ հասկանալի մի երեւոյթ պէտք է համարել ոչ միայն չաքարագործութեան, այլ ուրիշ համարեա բոլոր արդիւնաբերութեան և առևտուրի զանազան ճիւղերի վերաբերութեամբ: «Вѣст. Финансовъ»-ի խօսքով, Ռուսաստանում պատրաստած չաքարի գինը այնքան բարձրացաւ, որ այդ գինը հաւասարվում էր այն գինն, որով որ վաճառվում էր Ռուսաստանում արտասահմանի չաքարը, թէև սրա համար տրվում էր անազին մաքս և մեծ ճանապարհածախս: Գրանից պարզ երևում է թէ ինչ անազին գումարներ պէտք է աշխատելն չաքարագործները, քանի որ անազին տարբերութիւն մտաւ չաքարի իսկական արժողութեան և այն գին մէջ, որը նա ունէր բազմաթիւ Սակայն հետաքրքրականը այն է, թէ արդեօր չաքարի արդիւնաբերութիւնը կարողացաւ մնալ այդ չափաւէտ դրութեան մէջ, ի հարկէ ոչ թէ սպառողների, այլ չաքարագործների տեսակէտից:—Ոչ: Աւելին երեւում է տերապեւտում ի միջի այլոց և չաքարի արդիւնաբերութեան և առևտուրի մէջ: Շաքարագործների տեսակէտից ներկան բոլորովին նման չէ անցնալին: Շաքարագործութեան արհեստական չէ անցնալին: Բազմազան և մեծացան գործարանները, առանց մի հիմնական կապ ունենալու տեղական պէտքերի և նիւթերի արդիւնաբերութեան և մշակութեան հետ: Հետևանքն այն եղաւ, որ չաքարի պատրաստութեան գինը, փոխանակ ընկնելու, աւելի բարձրացաւ: Անցաւ մի փոքր ժամանակ և չաքարը հրապարակի վրա շաքարացաւ: Ինչպէս մի քանի ժամանակ առաջ գինը բարձրացել էր, այնուհետև սկսեց ընկնել: 1833 թինն չաքարի գինը 7 ր. 90 կոպէկից ընկաւ մինչև 5 ր., 1885 թուականին աւելի պակասեց: Շաքարագործները սկսեցին աղմուկ բարձրացնել, անցեալ տարվանից սկսած նրանք համարեա միացան, իրանց չահերը պաշտպանելու համար: Ռուսաց չաքարագործների գից աւելի աւելորդ չաքար կար: Ինչ պէտք էր անել: Առաջարկեցին աւելորդ չաքարը արտասահման ուղարկել, առում է «Русск. Вѣд.» լրագիրը, որպէս զի կարելի լինի չաքարի գին ընկնելու առաջն առնել: Մի քանի չաքարագործներ կառավարութիւնից պիւ մի խնդրեցին՝ չաքարը արտահանելու համար: Այդ խնդրքը յարգվեցաւ և արտահանվող չաքարի իւրաքանչիւր պտղին մի րուբլի պրէմիա նշանակվեցաւ զանազանից անցեալ տարվայ յուլիսի 12-ին: Պարզ է, որ այդ պրէմիան շաքարի չափանիւթիւնը գրգռեց: Շաքարի պատրաստութիւնը աւելացաւ, և ամենքն էլ ձգտում էին չաքար արտահանելու: Այդ բանը առանց ուշադրութեան չը մնաց արտասահմանում: Ռուսաստանի չաքարի գինը արտասահման

ընկաւ, և կրիզիսը քանի գնաց աւելի ծանր կերպարանք առաւ: Այս տարի պիւ միայն վերաբերութեամբ մի քանի չաքարագործներին աւելի ձեռնառու փոփոխութիւններ եղան, և չաքարի արտահանութիւնը աւելի սաստկացաւ: Հետևանքը այն եղաւ, որ մի քանի եւրոպական երկիրներ, ինչպէս Իտալիան, մինչև անգամ մեծ մաքս նշանակեցին Ռուսաստանի չաքարի վրա: Ռուսաց չաքարի գինը ընկաւ և անդիւրական հրապարակի վրա: Այդ անձեռնառու հետևանքը աւելի սուսեց չաքարագործներից շաքարին նոր արտոնութեան և պահանջի խնդրելուն: Նոր արտոնութեան և պահանջի գլխաւոր կէտը նրանումն էր, որ չաքարի մի յայտնի քանակութիւն Ռուսաստանի ներքին վաճառահանութեան համար պահելով, մնացածը պարտաւորեցին կերպով պէտք է արտահանել: Դէպի արտասահման, յայտնի պրէմիայով իւրաքանչիւր պտղի համար: Այդ նոր ցանկութիւնն էլ կատարվեցաւ: Օրինակի համար Պարսկաստան և Միջին-Ասիայի հրապարակները արտահանվող չաքարի պտղին նշանակված է 80 կոպէկ անվերադարձելի պրէմիա: Մինչև ներկայ թուականի յուլիս ամիսը պրէմիա տրված է 6,747,341 ռուբլի: Կառավարութեան կողմից յատկում է որ շուտով այդ պրէմիաների տալը կը կրճատվի, և հենց դրա ազդեցութեան տակ էր, որ այս տարի Կիեւում կայացաւ չաքարագործների ժողովը, որը վճռեց նորից դիմել կառավարութեանը խնդրելով՝ օրինակային կարգադրութիւններով չափանիւթ ներքին վաճառահանութեան չաքարը և պարտաւորեցուցիչ դարձնել արտահանութիւնը յայտնի քանակութեամբ: Այդ խնդրի ընդունումն համար կազմված է արդէն նոր կառավարչական յանձնաժողով: Պարզ է որ չաքարագործների այդ նոր պահանջի նպատակն է ոչնչացնել ամենայն տեսակ մրցում, և չաքարի գինը արհեստական կերպով բարձրացնել: Այդպիսի մի ներքին ընդհանուր պայմանագրութիւն չաքարագործների մէջ կարող է միշտ չաքարը թափաքանել ի վնաս սպառողների, մանաւանդ որ արտաքուստ մրցում չը կայ մաքսի պատճառով: Ահա այդ դրութեան մէջ է գտնվում ներկայումս Ռուսաստանում չաքարագործութեան հարցը, որը կանգ է առել մի հետաքրքիր կէտի վրա: Թէ ինչ հետևանք կարող է ծագել դրանից, թէ սպառողների և թէ առևտրական չաքարի արդիւնաբերութեան վրա,—այդ մասին կաշխատենք:

Այս յօդուածը արդէն վերջացած էր, երբ Պետերբուրգի ուսուցիչ լրագիրները բերեցին հետեւեալ լուրը. «Օրերումս ֆինանսների մինիստրութիւնը կը ներկայացնի մինիստրական մասնաժողովին մի յայտարարութիւն»՝ այն միջոցների մասին, որոնք պէտք է ձեռք առնելն չաքարագործութեան ճգնաժամին առաջն առնելու համար: Մինիստրութիւնը լուրջ ուշադրութիւն է դարձրել չաքարագործների պահանջներին վրա: Խ. Մ.

ՆԱՄԱՍԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Սեպտեմբերի 1-ին
Քանի որ ջաղաքակրթված ազգերի մէջ թէ առողջապահութիւնը և թէ ուրիշ շատ բաներ հրա-

ք երականութիւնն է մօտեցնում է Ատրնեսանին դէպի ներկայն, դէպի ժողովրդական նորաբողոք բարբառը, դէպի առօրեայ ժամանակի պահանջը: Նա ճառում է մեր նախնայրերին և նոցա սակաւաթիւ հետեւողներին, իսկ սա խօսում է նոր սերնդեան, ամբողին, հետազօտելով մանրակրկիտ՝ այս վերջին բոլոր խօսակցութեան դարձածներն և բառերն: Եթէ կարելի է այսպէս ասել, Բազմաթիւ կլասիկ հայկաբան է, իսկ Այստեանը բոմանտիկ: Այս երեւոյթը շատ սակաւ բացառութեամբ կարելի է ընդհանրացնել Միթիթարեանց երկու բաժնի (Վեներաիկ և Վիկենայի) մէջ տիրող ոգու վրա: Աւելորդ չէ յիշել ի հարկէ, որ այս վերջինում (Վիկենայի Միթիթարեաներում) նորերումս հանդէս են դուրս գալիս և այնպիսիներ (համեմատական լեզուաբանիչ հ. Սերոբէ Վ. Գեղվիշեան), որոնք մի սարսափելի ոճի (?) են գործում Կ. Պոլսի և Վենետիկի հայ-գրական ուղղադրութեան դէմ, ընդունելով և քարոզելով այն տառադրութիւնը, որ տարածուած է ռուսահայերում և որ, պէտք է ասած, ճշգրտորէն է Բայց այս մասին մի ուրիշ անգամ... Իսկ ինչ վերաբերում է արքայադ Այստեանի գիտութեան զանազան ճիւղերում ունեցած հմտութեան, մենք նրան համարձակ կարող ենք հռչակել իբրեւ քաջ բնագէտ, այս բա-

ռի ընդհանուր նշանակութեամբ:
գ) Մաթեմատիկական գիտութիւններում, ինչպիսի են, օրինակ, երկրաչափութիւն, ուսումնականութիւն, (Mathématique) գրադաշն (Algebre) և այլն հ. Արսէն վարդապետ ունի կատարեալ և փորձառու հմտութիւն: Բնագիտութիւնն մասնաւոր առումով (Physique), տարաւորութիւնը (Chimie) և մի խօսքով ընդհանրապէս բնական գիտութիւններն ուսումնական գիտութիւններն են:
դ) Շատերը չը գիտեն գրեթէ թէ նորընտիր արքայային, բացի այն, որ, ինչպէս վերև նշանակեցինք, յայտնի լեզուագէտ, ընտիր հայկաբան և նշանաւոր բնագէտ է, նաև մի երեկի նկարիչ էլ է: Մենք չենք խօսում այստեղ այն, ինչ որ լսել ենք հարեանյի, այլ ինչ որ տեսել ենք և շատերի հետ միասին հիացած ենք եղել: Նրա նկարները մի շատ գեղեցիկ հանդէս կարելի է կազմել:
Հնարկ է վերջապէս յիշել միթէ, որ այդ երեւելի ընդհանրակրթութիւններով օժտուած անձը դեռ իբրեւ աստղագէտ, իբրեւ պատմագէտ, իբրեւ փիլիսոփայ և իբրեւ աստուածագէտ կարող է մրցել այդ ճիւղերի խել մի մասնագէտների հետ:
Ասկայն ընթերցողը այժմ բնականաբար մեղ

կայական քայլերով են առաջ գնում, մեղանում միշտ յետադիմութիւն, միշտ խոր քուն է տիրում: Եւ առողջապահութիւնը մեղանում շատ խարխուլ հիմքի վրա է դրված: Ընդ է մտածում, թէ շատ գինի կամ արագ գործածելով, խակ կամ նեխած՝ միայն թէ արժան մրցեցնէր փոքր լցնելով թողի անազին քանակութիւնը կու տալով—մարմինն մեծ վնաս կարելի է հասցնել: Մեղանում կարծես թէ օրէնք է դարձել, դիմել օգնութեանը միայն այն ժամանակ, երբ օգնելն արդէն ուշ է, կամ դժուար, երբ ըստ բանից անցել է:
Երևանը հակաառողջապահական պայմաններ շատ ունի, որոնց թուով կարելի է հաշուել հենց նոյն իսկ նրա բնական դիրքը (փոսի մէջ ընկած) որ չունի բաւականացուցիչ և կանոնաւոր հողմահարութիւն (вентиляция), վերոյիշեալ պայմաններն են, որոնք զանազան հիւանդութիւններին հաստատու գրական կարող են լինել:
Բայց տարվան մէջ Երևանում փոքր ինչ անտանելի է ամառն իր չորով ու թոզով: Իսկ միւս երեք եղանակներն Երևանում միանգամայն սքանչելի կարելի է համարել, մասնաւոր դարձնում աշունը: Բողոքել բնութեան պէմ, որ նա մեղմացնի չորի աստիճանները—մեր բողոքը ընդ միշտ անուշադիր կը մնայ. այն ինչ թողի դէմ միշտ կարելի է հնար գործ դնել և այդ կողմից բնութիւնը չէ կարող անողոր լինել, նա մեղ հետ բաւական հաշտ է. մնում է միայն, որ գործենք:
Երևանի պէս տեղում, ուր որ համարեա ամեն տան բազից և փողոցից ջուրը քշւալով հոսում է, ժողովուրդը կարծես արհամարհանքով լինի նայելիս բնութեան այդ հրաշալիքի վրա: Ինչի ամեն մի տանտէր սովորութիւն չունի, մայրենի քաղաքի բարեկեցութիւնը աչքի առաջ առնելով, պարտաւորութիւնն չէ համարում ջրել իր տան առաջը, նստացիւն թողը, որ ամեն անգամ ձաշերից յետոյ, հիւանդ-արեւեան քամու աղբեցութեան տակ՝ թողը կատաղաբար ներս չը սողայ մեր բնակարանները, բերանները, թոքերն ու աչքերը: Վերջինք մեր քաղաքի յայտնի Աստաֆեան փողոցը, որի ալ ու ձախ կողմերում տընկած ծառերի (ուռենիների և ուրիշների) տակով անցնում է ջուրը: Փողոցի մօտ 1—2 վերստի տարածութեան վրա հազիւ թէ մի քանի տների առաջն է և փողոցի մօտ 1—2 վերստի տների հենց այնպէս էլ մնում են: Աստաֆեան փողոցը Երևանում առաջին փողոցը կարելի է համարել, իր թէ երկայնութեամբ և թէ լայնութեամբ:
Մեր համաքաղաքացի ուսանողները, որոնք այժմ որոշ կոնտիպենտն են կաղում Ռուսաստանի համալսարաններում աւարտածներից և որոնք (մեծամասնութեամբ) ամառ ժամանակ դառնում են հայրենիք, Աստաֆեան փողոցի վրա մանգալիս, յիշում էին Պետերբուրգի Նիվոսի պրօսպեկտը: Շատ անգամ էլ, երկնայեան պահում այդ փողոցի վրա մանգալիս, նրա ալ ու ձախ կողմ տնկած ուռենիների շաքերը, փողոցի մեծաքանակ անց ու դարձ անողները, քիչ էին մնացել: որ յարգելի ուսանողներին Բերլինի հռչակաւոր

«Unter den Linden» փողոցը յիշեցնել տային...
Եթէ հարկաւոր ուշադրութիւնն ու հոգացողութիւնը ձեռք առնվին, Երևանի Աստաֆեան փողոցը աննման փողոց կարող էր լինել: Գուցէ և ապագայում հենց այդպէս էլ լինի: Բայց ո՞վ է դրա մասին հոգացողը, փողոցին կենդանութիւն տուողը—կը պատասխանենք՝ նոյն իսկ ինքը՝ հոսող առուակից ջուր սրսկել փողոցի վրա, մաքրել տան առաջը, այն ինչ թողի անազին քանակութիւնը ակտիվացնելով է կու տալիս, այն էլ համարեա ամեն օր:
Քաղաքային վարչութիւնը սահմանել է երկու ջրաշաղ տայեր (Քիֆլիսի օրինակով): Բայց երկուսով ինչ կարելի է անել, քանի որ ամբողջ օրը յետ և առաջ մանգալով, հազիւ կարողանում են շաղ տալ վարչութեան տան առաջից սկսած մինչև նորապստ զինազալի շինութեան առաջը, կամ փոքր ինչ հեռու Ջրված շատ տեղերն էլ արեւից չորանում, կրկին փոշի են դառնում: Չաշերից յետոյ՝ ժամը 4—5-ին, թողի բարձրացած միջոցին, Երևանը անտանելի է:
Բայց որ Աստաֆեան փողոցի մասին մտածելու, թողի առաջն առնելու համար միջոցներ պէտք է ձեռք առնվին, այդ կը վկայէ ամեն մէկը:
Քիչ վնաս չէ հասցնում թողը և Երևանի խանութներին, որոնց ապրանքների վրա թողը շատ անգամ անազին չերտորով է նստում:
Խանութների անունը յիշելով, պարտականութիւն եմ համարում կանգ առնել մի թունաւորիչ սովորութեան վրա, որի մասին զաքարիական լուրջութիւն է տրել մինչև այժմ: Գիտեն և չեն յայտնում, կամ թէ գիտութեամբ են լուր, այդ ինչ մտքն է. այլապէս միայն, որ մօտերում, երբ բարձրացայ մի նոր շինվող խանութի կտուրի վրա, աչքերիս մի զոռով տեսարան ներկայացաւ: Խանութների, համարեա առանց բացառութեան, բոլորի կտուրներն էլ սաստիկ ապակաւորութեան մէջ են գտնվում: Խանութի կտուրներում մեծ քանակութեամբ կրկնաշերտ են կուտակված, որոնցից ալ ու ձախ սարսափելի դարձահոտութիւն է բուրում (նոյն իսկ հոտը անցնում է դէպի խանութներն ու նրանց շրջակայները):
Բայց այդ կրկնաշերտ արեւից լուծվելով, չորանում է և փողոցի մօտ 1—2 վերստի տների սողում անց ու դարձ անողների թոքերի մէջ: Վերջապէս ինչ պատիւ մեր վաճառականներին, որոնք խանութի ներսը նստած՝ Աստաֆեան փողոցի մօտ 1—2 վերստի տների խանութի թոյլ չեն տալիս որ կտուրից 1/2 սանտիմետր անցնի մուշտարու օդին,—այն ինչ վերեւում, տեղի է ունենում այդպիսի ապականութիւն...
Այստեղ մենք դիմում ենք այն անձանց, որոնց վրա պարտաւորութիւնն է դրված քաղաքի առողջապահական մասի վրա հոգալու: Խնդրում ենք լուրջ հոգաւորութիւն տանել այդ երեւոյթի առաջն առնելու համար, անօրինել խտապահանջ կանոններ և ազատել միանգամայն խանութների կտուրները այդ դարչելի սովորութիւնից: Իսկ թէ

Բաթում. Առաքել Սարգսյանեանց

մեր ձայնը արձագանք չի գտնի հողատիրոջ ներքին սրտում, այն ժամանակ ապականողների կապրիզները կը պատժվեն նրանով, որ մի գեղեցիկ օր քաղաքի մէջ կը յայտնվեն այլ և այլ վարակիչ հիւանդութիւններ:

Եթէ Երևանի քաղաքային գանձարանը դժուարանում է հասարակական կլօսակներ (արտաքինոցներ) շինութեանը ձեռնամուխ լինելու, թող Երևանի հասարակութիւնը հաւաքական ոյժով միջամտէ գործին, որով մեծ բարիք հասցրած կը լինի թէ քաղաքի գանձարանին և թէ իր բերած դոնացիութիւնը ընդմիջող տօնելի յիշատակ կը մնայ թէ ապագայ սերունդի և թէ քաղաքի նորանոր այցելուների համար, որով կարգադրանքի այն երևելի ասածը թէ «մի ժողովուրդի կուլտուրա» կան աստիճանը իմացվում է այն միջոցով, որով նա մարմնավոր է իր կղկղաձեր:

Ա. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի երիտասարդ, որ էջմիածնի Գեորգեան ձեռնարանից այս տարի օրինաւոր վկայական է ստացել, դուրս գալով ձեռնարանի հինգերորդ դասարանից, կուղենար ուսուցչի պաշտօն ստանալ հայոց դպրոցներում: Կարող է դասախօսել հետեւեալ առարկաները. հայոց լեզու, հայոց պատմութիւն, հայոց աշխարհագրութիւն, թարգմանութիւն, ընդհանուր պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, և ձայնագրութիւն: Պարոնի հասցէի մասին կարելի է տեղեկանալ «Մշակի» խմբագրութեան մէջ:

ՇԱՄԱՆՈՒՅՑ մեզ գրում են: «Մեզ մօտ լրագրութիւնը շատ քիչ մուտք է գործում. մեկը ունենք այստեղ մարդիկ, որոնք մեծ կարողութիւն են դիպել, իրանք էլ քաղաքի մէջ զեր խաղաղուհներ են, բայց իրանք իրանց փողով լրագիր երբեք չեն ստանում, այլ սրանից նրանից խնդրելով են կարդում: Նոր գրքերն էլ այստեղ շատ քիչ են մուտք գործում: Պատճառը նոյն է. մէկը առնում է, իսկ մնացած 30—40 հոգին նրանից վերցնում կարդում են մուգ տատ Թայտնի բան է, որ այս տեսակ հանգամանքներում մեր գրականութիւնը չէ կարող առաջ գնալ և պահանջ դառնալ հասարակութեան մէջ: Շատ տարի սրանից առաջ շամախեցիք մի գրատուն են հիմնել, որ հիմնված օրից մինչև այսօր նոր գրքերով շատ քիչ է աւելացել. սրա համար մտածողներ շատ քիչ են եղել: Բացի նրանից որ նոր գրքեր չեն ընծայում գրադարանին նրա անդամները, բայց իրանք էլ մի մի կտոր գրքեր հեռանքը առած, հեռանում են այլ քաղաքներ: Ուրեմն չէ կարելի ասել, որ հայը չէ սիրում լրագրութիւն, միայն թէ ուրիշի հաշով կարդայ. չէ կարելի ասել որ գրքեր կարդալ չը սիրէ հայը, միայն թէ գրքի համար փող չը վճարէ, այլ եթէ հնար է ուրիշի կամ ընդհանրութեանը պատկանող գրքերը իրան է սեփականացնում»:

«Մշակի» № 102 մէջ տպված «Հայոց Թատրոն» վերնագրով յօդուածում մեր աշխատակիցը խօսելով թիֆլիսի հայոց թատրոնական նոր խմբի կազմակերպութեան մասին, սխալմամբ մոռացել է արդէն վարձված դերասանների և դերասանուհիների թիւում յիշել տիկին Փառանձեմի անունը: Այժմ մենք հաստատ աղբիւրներից իմացանք որ և այդ տիկինն էլ մասնակցելու է հայոց խմբի ներկայացումներին:

Հրատարակվեցաւ «Համառօտ հաշիւ հայոց բարեգործական ընկերութեան կողմից»: Հաշիւը վերաբերվում է 1881—1885 թվերին: Տպված է 8. Մարտիտոսեանցի տպարանում: Կաշիստեմը խօսել այդ հաշիւի մասին:

Երեւնիւն՝ մեզ գրում են, որ այս օրերս անշատ գողեր մտել են տեղին նահանգական դատարանի նախագահ պ. Մէլիք-Աղամալեանի տունը, մինչև որ նա իր ընտանիքով բացակայ էր Երևանից, գտնվելով Դարաչիլագ ամարանոցում: Գողերը կտրել, կողպեցի տարել են բազմաթիւ իրեղէններ պ. Մէլիք-Աղամալեանի տանից: Դատաստանական քննութիւնը սկսված է: Ասում են որ գողութեան մէջ կասկածվածներից մի քանիսն են արդէն բռնվել են:

Մեր թղթակիցը գրում է մեզ Երեւնիւն՝ հետեւեալը: «Հաստատ աղբիւրներից իմացել եմ, որ ժողովուրդից յարգված և նրա կատարեալ համա-

կրութիւնը վայելող երևանեան թեմի թեմական առաջնորդ գերապատիւ Գեորգ եպիսկոպոս Սուրենեանց, օգոստոսի 25-ին հրաժարական է տուել իր պաշտօնից, տկարութեան պատճառով»:

Ուսումնական ռուս ճանապարհորդ, բժշկապետ Ելիսէեվ, որ եկել է Անդրկովկաս և որ դիտարկութիւն ունէր այստեղից գնալ թիւրքաց Հայաստան, այդ երկրում ճանապարհորդելու, նրան ազգագրական ու անտրօպոլոգիական տեսակէտից ուսումնասիրելու նպատակով, այժմ, որքան լսում ենք, քանի մի պատճառներով փոխել է իր դիտարկութիւնը և այստեղից, թիֆլիսից, որտեղ մենք պատիւ ունեցանք ծանօթանալ պարոնի հետ, ուղևորվեց դէպի Երևանի նահանգը: Պ. Ելիսէեվ այս տարի կը ճանապարհորդի միմիայն Երևանի նահանգում, յետաձգելով իր ճանապարհորդութիւնը թիւրքաց Հայաստանում մի այլ, աւելի պատեհ ժամանակի:

Երևանից մեզ գրում են: «Ձեր լրագրի № 95-ի առաջնորդը մեծ հետաքրքրութեամբ կարդացվեցաւ. յօդուածի տմեն մի նախադասութիւնը հայի իրական կեանքի ամենաճիշդ պատկեր է ներկայացնում»:

Շվեյցարիայի ժընեվ քաղաքից մեզ գրում են, որ ներկայ ուսումնական վեցամսեակին (սեպտեմբերին) ժընեվի համալսարանում ուսանում են 9 կովկասեցի հայեր, 6 թիւրքիացի հայեր և մի հայ ուսանողուհի, թիֆլիսից:

Աւստրո-Ունգարիայում խօլերայի սաստկանալու պատճառով, Պետերբուրգի բժշկական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, մեծել է կարճ միջոցում մշակել մի ծրագիր, որը կարելի լինի գործադրել խօլերայի առաջն առնելու համար:

Կենսական միջերեւոյի կեղծելու առաջն առնելու համար, Պետերբուրգի Մէնայա հրապարակի վաճառանոցի վրա հիմնվում է առողջ ապահովան կայարան, որը պէտք է զննէ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, բոլոր վաճառվող միջերեւոյից ֆաղաքային վարչութիւնը իր կողմից պէտք է տայ կայարանին մի փոքրիկ առքանդիս:

Ամսիս 14-ին տեղի ունեցաւ թիֆլիսի բէալական դպրոցի տարեկան աւել տ' նոյն դպրոցի շինութեան մէջ: Հանդիսաւոր ակտիւն ներկայ էին բազմաթիւ հիւրեր՝ կանաք և տղամարդիկ. ներկայ էին և թիֆլիսի ռուսաց սրբազան էկզարխը և կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Յանովսկի: Հանդէսը բացվեցաւ կէսօրից յետոյ ժամի մէկին, աշակերտների երգեցիկ խմբի ներդաշնակ երգեցողութեամբ: Բէալական դպրոցի ղեկավար, Տերիտիւն, կարգաց 1885/86 թվականի դպրոցական հաշիւը, որից երևեցաւ, որ ուսումնարանի աշակերտների թիւը է 354: Աշակերտների մեծ մասը ռուսներ, հայեր և վրացիներ են. կան և ուրիշ ազգերից: Մասնատեղականները 8 հոգի են. հայերի թիւը 123 է: Հայոց լեզուն աւանդվում է առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ դասարաններում, և հայերէն սովորող հայերի թիւը 68 է: Պատմութեան ուսուցիչ պ. Միկելաձէ մի ճառ խօսեց իրաւական հարցի մասին ճառախօսը ոգեւորված կերպով նկարագրեց, թէ ինչպէս ծագեց իրաւագիտությունը հողային հարցը, թէ ինչ թշնամութիւն սերմանվեցաւ տիրապետող և հպատակ ժողովուրդի մէջ, առաջինների բռնի և ճնշող ուղղութեան պատճառով, թէ ինչ ծանր դրութեան մէջ ընկաւ իրաւգիտան, և թէ, վերջապէս, ինչ հետեանք ունեցաւ Պարսիկի և Գաղղոստի նախագիծը: Ճառը ընդունվեցաւ ծափահարութեամբ: Մանկավարժական խորհրդի կարգադրութեամբ, հանդիսականների առաջ մի քանի աշակերտներին տրուեցան պարգևներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՒՆԵՐԱ ԱՒՍՏՐՈ-ՈՒՆԳԱՐԻԱՑՈՒՄ

Խօլերան սաստկանում է,—հաւ այն լուրը, որը բերում են վերջին հեռագրիւրները: Խօլերան թշուառութիւն տարածելով խաղիայում, արդէն անցել է Աւստրո-Ունգարիա: Պոլսում արդէն կարանտին է դրված: Կարանտին է դրված օրերում և Օդէսայում: Գոռնայեան նաւահանգիստներից եկող նաւերի համար: Աւստրո-Ունգարիա-

յում կառավարութիւնը պաշտօնապէս ընդունեց ասիական խօլերայի գոյութիւնը, թէ և բոլորապէս անցքերը, և Բալկանի հարցը իրանց քաղաքական բոլոր ելեւէջիւրով և ձեռնադրութեանը կարողանում էին գրաւել այն կառավարութեան ուղադրութիւնը, որը իրան ժողովուրդի բարբորութեան ծառայելու կոչված է համարում, և այն էլ խօլերայի տարածված սարսափի ժանանակ: Տեղեկութիւններից երևում է, որ խօլերան տարածված է արդէն իրօրում, Սերմինում, Սկալինում, Բուռնայում, Կլէյնբերգում, Մարկովսկինում, Կորանենկոյում ու Բովենայում: Գալմացիայում երկրաբանային յարաբերութիւնները մասամբ դադարեցրած են խօլերայի տարածվելու պատճառով: Խօլերայից մեռնողները մեծ մասամբ Cholera nostras տեսակի խօլերայով են մեռնում: Օգոստոսի 31-ից Տրիեստում խօլերան շատ զգալի կերպով սաստկացաւ Պեշտի բանտում բանտարկեալների մէջ երևեցաւ խօլերա: Հիւանդացիները 6—7 ժամից յետոյ մեռնում են: Ժողովուրդը յուսահատութեան մէջ է և մեծ թշնամութեամբ և կասկածով է վերաբերվում դէպի բժշկական օգնութիւնը և դէպի ոստիկանութեան ձեռք առած միջոցները: Կառավարութեան ներկայացուցիչները մի քանի տեղերում ցոյց են տալիս գովելի եռանդ և հողատարութիւն: Մի քանի տեղերի հիւանդանոցների մէջ արդէն մեծ քանակութեամբ խօլերայով հիւանդներ են բերված: Քաղաքային վարչութիւնները օգնութիւն են հասցնում աղքատ ընտանիքներին: Պրոֆէսոր Բրունենտի կարգաց համալսարանում մի դասախօսութիւն, որի մէջ խօսեց այժմեան կարանտինների մասին և հողատարութիւն: Խօլերայի դէմ առնված պաշտօնական միջոցները պրոֆէսորի կարծիքով, չեն համապատասխանում գիտութեան իսկական պահանջներին, և այդ պատճառով կարևոր կէտերը մոռացութեան են տրված, ի նկատի առնելով միմիայն երկրորդական պայմանները:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամերիկայում այժմ գրադված են մշտական ցուցահանդէսներ Նախագծեր կազմելով: Այդ բանի մէջ կը մասնակցեն հիւսիսային, միջին և հարավային Ամերիկան: 1889 թվ. 4-ի փետրվարի 20-ին կը լրանայ Միացեալ-Նահանգների սահմանադրութեան գոյութեան 100-ամեակը. իսկ 1892 թվ. հոկտեմբերի 20-ին լրանալու է Քրիստոսափոր Կոլումբոսի ձեռքով Ամերիկայի բացման 400-ամեակը: Ցանկութիւն կայ այդ երկու նշանաւոր օրերը փառաւոր կերպով տօնելու, և բանալու մշտական ցուցահանդէս Ամերիկայի արդիւնաբերութեան համար: Ուղում են ցուցահանդէսը Վաշինգտոնում բանալու կարծում են, որ 1892 թվ. ոչ միայն Միացեալ-Նահանգները, այլ և Ամերիկայի 15 հանրապետութիւնները, Բրազիլիան, մինչև անգամ Իտալիան,—ինչպէս Կոլումբոսի հայրենիքը, և Սլաւոնիան,—որտեղից Կոլումբոսը Ամերիկա գնաց, կը մասնակցեն այդ նշանաւոր ցուցահանդէսին և տոնախմբութիւններին: Ցուցահանդէսի մէջ կը կառուցանվի Կոլումբոսի փառաւոր և հակայական արձանը:

—Շօտլանդիայից հաղորդում են, որ այնտեղ շուտով տեղի կունենայ մանր կապալաւորների գիւղական բանտերի ժողով:

—Սլովակից ամենատիւր տեղեկութիւններ են գալիս. սովոր աւելի ու աւելի սաստկանում է Գոնդօլֆի ժողովուրդը. դուռնագուռը հեռանում է:

—Սերբիական մի քանի կուսակցութիւններ, բոլորական անցքերի աղբիւրութեան տակ, սկսել են թշնամական պրօպագանդա անել Միլանի և նրա կառավարութեան դէմ:

—«Polit. Corres.» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Անգլիական շրջաններում շատերը համոզված են, որ անգլիական քաղաքականութեան մէջ, վերաբերութեան արեւելքի, մեծ փոփոխութիւններ են եղել: Բիկոնսֆիլդի պաշտած քաղաքականութիւնը այժմ այլ և ուրիշ գործող պաշտպաններն են: Պոլսից կորցրել է այժմ իր նախկին նշանակութիւնը Անգլիայի համար: Ռուսաստանը ունի արդէն իր նաւատորմը Սև-ծովում, որը հարկաւոր ժամանակը կարող է մտնել Միջերկրական ծովը: Սուլթանի իշխանութիւնը մի մեծ ապահովութիւն չէ Պոլսի ունեցած նշանակութեան համար, վերաբերութեամբ մրցող քաղաքականութեան կասպից ծովը և Միւրվը ճանապարհ են բաց արել Ռուսաստանի համար դէպի հարաւ»:

Անգլիայում գիտեն, որ Պոլսը իրանց համար շատ էլ մեծ ապահովութիւն չէ: Տաճկաստանի դրութիւնը, աֆգանական խնդիրը, սուլթանի կառավարութեան վիճակը և ուրիշ մի քանի հանգամանքներ փոխել են տալիս անգլիական քաղաքականութեան յենման կէտը Պոլսից Աֆգանիստան»:

—Լոնդոնից հաղորդում են, որ կառավարութիւնը կազմեց մի յանձնաժողով քննելու բանտերի դրութիւնը և որոշելու բանելու ժամերը և վարձը:

—Հոմբից հեռագրում են «Temps» լրագրին, իբրև հաստատ աղբիւրից վերցրած տեղեկութիւն, որ Բիսմարկ խօսելով իշխան Ալեքսանդրի հրաժարականի մասին, ասել է՝ «դա առ. այժմ միակ միջոցն էր առաջն առնելու եւրօպական ներքին պատերազմները»:

—Բալարիայից սեպտեմբերի 7-ին Գլադստօն վերադարձաւ Լոնդոն:

—Գերմանիայում պատրաստվում է իշխան Ալեքսանդրի՝ Բոլգարիայի կառավարութեան հօթնամեայ մանրամասն պատմութիւնը:

—Լոնդոնում սպասում են իշխան Ալեքսանդրին:

—Վիեննայից գրում են «Times» լրագրին հետեւեալը: «Երէկ պետութիւնների բանակցութիւնները բոլորական հարցի առիթով լաւ հետեանք ունեցան: Այժմ յոյս կայ, որ բոլորական հարցը խաղաղ վախճան կունենայ: Ռուսաստանը առանձին չի դործի, և թէ և ուղարկում է Բոլգարիա իր կոմիտարին, բայց այդ մի որ և է ցոյցի ընաւորութիւն չունի: Ռուսաստանը կը հրաւիրի միւս պետութիւններին մասնակցել այն դեսպանաժողովին, որի լինելը ցանկալի է՝ բոլորական խնդիրը լուծելու համար»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 սեպտեմբերի: Պետական կառավարության մինիստրը որոշեց, եւրօպական Ռուսաստանի և կովկասեան երկրի գինեգործական տեղերի մէջ մաքառումն ֆիզիկոսէրայի դէմ յանձնվում է կովկասեան և Ղրիմեան մասնաժողովներին և Օդէսայի յանձնաժողովին: Կովկասեան մասնաժողովը գործունէութիւնը տարածվում է Անդրկովկասի, Հիւսիսային կովկասի և Աստրախանեան նահանգի վրա, իսկ Օդէսեան յանձնաժողովը գործունէութիւնը՝ Խերսոնեան, Բեսարաբեան, Պոդոլեան և Կիէվեան նահանգների վրա: Ֆիզիկոսէրային հաստատութիւններին իրաւունք է տրվում վերահսկել խաղողի այգիները վրա և ոչնչացնել վարակված և վարակվածներին հարեան այգիները, նոյնպէս պահպանող գիծ կազմակերպելու համար քննութեան երկարիկ առևտրական այգիները: Խաղողի այգիները և տեղերը բաժանվում են վարակվածների, կասկածաւորների և առողջների վրա: Վարակված տեղերից արգելվում է դուրս բերել ամեն տեսակ պարարտացնող նիւթը (կոմպոստ), այգիների հողը, խաղողի վազերը համար գործածվող հաշաները և բիրները և խաղողի ամեն տեսակ մասերը: Կասկածաւոր տեղերից արգելվում է դուրս տանել խաղողի որթիները հաշաները և բիրները և որթիները ամեն տեսակ մասերը: Վարակված և կասկածաւոր տեղերում արգելվում է մի կառավարչից միւս կառավարչի թիւը, բահեր և փորիչներ միմեանց փոխ տալու: Ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը արգելվում է խաղողի այգիների այցելել վարակված տեղերում, առանց յատուկ թուղթութեան: Այգեատերերին արգելվում է ինքնակամ կերպով ձեռնամուխ լինել ֆիզիկոսէրայի ոչնչացնելուն, կամ խաղողի որթիների բժշկելուն:

ՕԴԵՍՍԱ, 13 սեպտեմբերի: Աւստրո-Ունգարիայում խօլերայի սաստկանալու պատճառով, Օդէսայի գինեգործական հանգանակներ անհրաժեշտ է համարել հաստատել Բեսարաբիայի սահմանագիծի վրա տան և մէկ կարանտինային տեղեր:

ԲՈՒՇՆՈՒԿ, 13 սեպտեմբերի: Բուսական կառավարութիւնը զանազան միջոցներով աշխատում է Բուսնիայի կարլ թագաւորի թեմաժողովները բոլորական զահի վրա աշողեցնելու: Զախար Ստոյանով գետեղեց լուսնական լրագիրներում այդ մտքով մի պրօկլամացիա, որ իբր թէ արտայայտութիւն է բոլորների ցանկութեան:

